ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՌԱՋԻՆ ԱՏՅԱՆԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ
ԻՐԱՎԱՍՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ
ԷՐԵԲՈՒՆԻ ՆՍՏԱՎԱՅՐ
(ՀՀ, համայնք ԵՐԵՎԱՆ, ԷՐԵԲՈՒՆԻ, ԽՈՐԵՆԱՑՈՒ Փ., մասնաշենք 162Ա)

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀԱՅՑԱԴԻՄՈՒՄԸ ՎԱՐՈՒՅԹ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ԵԴ2/4189/02/24 **ք. Երևան**
21 Հունիսի 2024թ

Հայաստանի Հանրապետության Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանը՝ նախագահությամբ դատավոր Ա.Քյուրքչյանի, քննարկելով ըստ հայցի «Ամազոն Իմպորտ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության (այսուհետ՝ Հայցվոր) ընդդեմ «Երևանի Միխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» հիմնադրամի՝ ընկերությանը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու մասին որոշումը անվավեր ճանաչելու պահանջի մասին, հայցադիմումը վարույթ ընդունելու հարցը,

Պ Ա Ր Զ Ե Ց

Դատարանի՝ 04.06.2024թ. «Հայցադիմումը վերադարձնելու մասին» որոշմամբ հայցադիմումը վերադարձվել է, որը Հայցվորը ստացել է 07.06.2024թ.:

Հայցվորի անունից 17.06.2024թ. էլեկտրոնային համակարգի միջոցով կրկին ներկայացվել է հայցադիմում, որը 17.06.2024թ. մակագրվել է Դատարանին: Հայցադիմումը՝ կից փաստաթղթերով, Դատարանին հասանելի է դարձել 18.06.2024թ.:

Ուսումնասիրելով հայցադիմումը և կից փաստաթղթերը՝ Դատարանն արձանագրում է, որ դրանք ներկայացվել են ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքով սահմանված պահանջների պահպանմամբ, և առկա չեն հայցադիմումի ընդունումը մերժելու կամ այն վերադարձնելու հիմքերը:
Անդրադառնալով «Բաց թողնված դատավարական ժամկետը վերականգնելու վերաբերյալ» միջնորդությանը, ապա Դատարանը հարկ է համարում արձանագրել, որ Էլեկտրոնային համակարգի միջոցով նույն քաղաքացիական գործի շրջանակներում կրկին ներկայացված և դատարանին մակագրված հայցադիմումը կրկին ներկայացնելու ժամկետը բացթողնելու ուժով չընդունելու գործիքակազմ սահմանված չէ, որպիսի պայմաններում Դատարանը քննարկվող միջնորդությունը համարում է առարկայազուրկ:
Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 5-րդ, 121-րդ, 122-րդ, 124-րդ, 125-րդ, 199-րդ և 200-րդ հոդվածներով՝ Դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

Հայցադիմումն ընդունել վարույթ:

Որոշումն ուժի մեջ է մտնում կայացման պահից և ենթակա չէ բողոքարկման:

ԴԱՏԱՎՈՐ՝ Digitally signed by KYURKCHYAN ALLA 8010940461 Date: 2024.06.21 11:25:56 AMT **ԱԼԼԱ ՔՅՈՒՐՔՉՅԱՆ**

Տվյալ ֆայլերին կարող եք ծանոթանալ նաև մուտք գործելով "Էլեկտրոնային դատավարություն" համակարգ՝ cabinet.armlex.am